ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Ն ՀՀՀ-ՄԱԱՊՁԲ-20/11-Պ

ք.Երևան 24-ը հունիսի 2020թ.

«Ալեռտո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ս.Բաղդասարյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող», մի կողմից, և

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Սարգսյանի, ով գործում է Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 21.04.2020թ.-ի թիվ 16-Ա որոշման հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մյուս կողմից,

(այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),

կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետում և հասցեով Գնորդին մատակարարել սույն Պայմանագրի Հավելված 1-ում նշված ապրանքները (այսուհետ՝ Ապրանքներ), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքները և վճարել դրանց դիմաց սույն Պայմանագրով նախատեսված կարգով, չափով և ժամկետում:

1.2 Սույն Պայմանագրով սահմանված Ապրանքները մատակարարվելու են ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26 հասցեով՝ սույն Պայմանագիրը ստորագրելուց մինչև 2020թ.-ի հուլիսի 10-ը ներառյալ:

1.3 Կողմերը երաշխավորում և հավաստում են, որ իրավասու են ստորագրելու սույն Պայմանագիրը և ունեն սույն Պայմանագիրը կատարելու համար բոլոր անհրաժեշտ իրավունքները, թույլտվությունները և համաձայնությունները:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 ***Վաճառողն իրավունք ունի՝***

2.1.1 Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետում և հասցեով մատակարարված Ապրանքները:

2.1.2 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքների համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.1.3 Գնորդի համաձայնությամբ Ապրանքները մատակարարել վաղաժամկետ:

2.2 ***Վաճառողը պարտավոր է՝***

2.2.1 Պայմանագրով նախատեսված ժամկետում և հասցեով Գնորդին հանձնել Պայմանագրով և կիրառելի օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, պահանջներին, կանոններին բավարարող որակի, Պայմանագրով նախատեսված քանակի և տեսակի Ապրանքներ:

2.2.2 Գնորդի կողմից Ապրանքների որակը հավաստող ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը տրամադրելու պահանջ ներկայացվելու դեպքում՝ տրամադրել նաև այդպիսի փաստաթղթերը:

2.2.3 Գնորդին հանձնել Ապրանքների պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը, եթե այդպիսիք առկա են և կիրառելի են Ապրանքների բնույթից ելնելով:

2.2.4 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանքներ:

2.2.5 Պայմանագրի 2.3.2 կետի ii ենթակետով, 2.3.3 կետի i ենթակետով, ինչպես նաև 2.3.4 կետի iii ենթակետով նախատեսված դեպքերում, ապահովել Ապրանքների մատակարարումը Գնորդի կողմից սահմանված ժամկետում:

2.2.6 Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 2.4.2 կետին համապատասխան պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքները կամ ողջամիտ ժամկետում այլ կերպ տնօրինել դրանք և հատուցել Ապրանքները պատասխանատու պահպանության ընդունելու, դրանք իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված Գնորդի կատարած անհրաժեշտ ծախսերը:

2.2.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված համապատասխանաբար տույժը և տուգանքը:

2.2.8 Պայմանագրի 2.3.6 կետով նախատեսված իրավիճակներում Պայմանագրի լուծման դեպքում, Գնորդին հատուցել վերջինիս պատճառված վնասները:

2.2.9 Պայմանագրի գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում, դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

2.3 ***Գնորդն իրավունք ունի՝***

2.3.1 Ապրանքները Կողմերի միջև համաձայնեցված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարվելու դեպքում իր հայեցողությամբ հրաժարվել Ապրանքներից, կամ սահմանել Ապրանքների մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժը:

2.3.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրով նախատեսված բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

i. պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

ii. չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքներով անհատույց փոխարինելու ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարել Պայմանագրի 5.3 կետով նախատեսված տուգանքը և 5.2 կետով նախատեսված տույժը.

iii. հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնել Ապրանքների համար վճարված գումարը, եթե Ապրանքների համար արդեն իսկ վճարվել է:

2.3.3 Եթե հանձնվել են Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանքներ, ապա՝

i. պահանջել լրացնել Ապրանքների պակաս հանձնված քանակը և վճարել Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժը.

ii. հրաժարվել հանձնված Ապրանքներից և դրանց դիմաց վճարելուց, իսկ եթե Ապրանքների համար արդեն իսկ վճարվել է՝ պահանջել վերադարձնել վճարված գումարը:

2.3.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

i. ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքները և հրաժարվել մնացած ապրանքներից.

ii. հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից.

iii. պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով և պահանջել Վաճառողից վճարել Պայմանագրի 5.3 կետով նախատեսված տուգանքը և 5.2 կետով նախատեսված տույժը:

2.3.5 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագիրը լուծելուց հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանքներ՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության, ինչպես նաև Ապրանքներն այլ անձից ձեռք բերելու համար Գնորդի կատարած բոլոր այլ անհրաժեշտ և ողջամիտ ծախսերի չափով:

2.3.6 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի) և պահանջել վնասների հատուցում, եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Ընդ որում, Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

i. մատակարարվել է անպատշաճ որակի և/կամ տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

ii. հանձնվել է պակաս քանակով ապրանք, որը չի կարող լրացվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

iii. խախտվել է Ապրանքների մատակարարման համար սույն Պայմանագրով սահմանված ժամկետը:

2.3.7 Զննել Ապրանքները և հայտնաբերված թերությունների մասին սույն Պայմանագրով սահմանված կարգով տեղեկացնել Վաճառողին:

2.4 ***Գնորդը պարտավոր է՝***

2.4.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.4.2 Վաճառողի հանձնած Ապրանքներից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքների պատասխանատու պահպանությունը և դրա մասին սույն Պայմանագրով սահմանված ժամկետում տեղեկացնել Վաճառողին:

2.4.3 Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետում և հասցեով մատակարարված Ապրանքներն ընդունելու դեպքում, Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում նաև՝ Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4.4 Ապրանքների որակի, քանակի, տեսականու մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքների բնույթից և նշանակությունից:

2.4.5 Ապրանքների մատակարարումը ապահովելու համար Վաճառողին ապահովել համապատասխան պայմաններով, այդ թվում, բայց չսահմանափակվելով, Վաճառողի ներկայացուցիչներին տրամադրել Գնորդի տարածք մուտք գործելու հնարավորություն և այլն:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրով մատակարարման ենթակա Ապրանքների ընդհանուր արժեքը կազմում է 807 800 (ութ հարյուր յոթ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ՝ համաձայն սույն Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված նախահաշվի: Սույն Պայմանագրի ընդհանուր արժեքը ներառում է Պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից իրականացվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման ծախսերը, ինչպես նաև՝ պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքների դիմաց վճարումն իրականացնում է հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-վավերագրի երկկողմանի հաստատվելուց 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3 Վճարումն իրականացվում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Վճարման ամսաթիվ է համարվում Գնորդի բանկային հաշվից դրամական միջոցների ելքագրման ամսաթիվը: Բանկային ծախսերը Գնորդի բանկում կատարում է Գնորդը, իսկ Վաճառողի բանկում՝ Վաճառողը:

4. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

4.1 Ապրանքներն ընդունվում են Վաճառողի և Գնորդի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքների մատակարարման օրվանից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողը Գնորդին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշիվ-վավերագիրը:

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե Ապրանքները համապատասխանում են Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

i. հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

ii. Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

4.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշիվ-վավերագիրը ստանալու օրվանից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության և հաշիվ-վավերագրի մեկական օրինակները կամ Ապրանքները չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.4 Եթե Պայմանագրի 4.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում Ապրանքները կամ չի մերժում դրանց ընդունումը, ապա Ապրանքները համարվում են ընդունված և Պայմանագրի 4.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշիվ-վավերագիրը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում Ապրանքների որակի, մատակարարման ժամկետի և տեսակի պայմանի պահպանման համար:

5.2 Ապրանքների մատակարարման համար սույն Պայմանագրով սահմանված ժամկետի խախտման դեպքում, Վաճառողից կետանցի յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքների գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժը հաշվարկվում է Կողմերի միջև համաձայնեցված մատակարարման ժամկետից մինչև Կողմերի կողմից սույն Պայմանագրով համաձայնեցված ծավալներով պատշաճ որակի և տեսակի պայմանի պահպանմամբ Ապրանքները Գնորդին փաստացի հանձնելու օրն ընկած ժամանակահատվածի համար:

5.3 Պայմանագրի Հավելված 1-ում նշված բնութագրին չհամապատասխանող Ապրանքներ մատակարարելու յուրաքանչյուր դեպքում, Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի գնի 10 (տասը) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Մատակարարված Ապրանքների դիմաց վճարելու սույն Պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում, Գնորդի նկատմամբ կետանցի յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում է տույժ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան վճարման ենթական գումարի 5 (հինգ) տոկոսը:

5.6 Տուժանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.7 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրվելու պահից և գործում է մինչև Կողմերի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Ապրանքների մատակարարման ժամկետը Վաճառողի խնդրանքով կարող է երկարաձգվել՝ մինչև այդպիսի ժամկետի լրանալը՝ պայմանով, որ մատակարարման ժամկետի երկարաձգման դեպքում Գնորդի մոտ չի վերանա Ապրանքների օգտագործման պահանջը:

7.3 Կողմերից որևէ մեկն իրավունք չունի սույն Պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցելու երրորդ անձի առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության:

7.4 Սույն Պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով առանց Կողմերի գրավոր համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.5 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ Կողմի օգուտը կամ կրած վնասն են:

7.6 Սույն Պայմանագրի Հավելված 1-ը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

7.7 Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները, ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակներում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

7.8 Սույն Պայմանագրի յուրաքանչյուր կետ կամ պայման իրենից ներկայացնում է առանձին և ինքնուրույն դրույթ: Եթե Պայմանագրի որևէ դրույթ դատական կարգով կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ ճանաչվի անվավեր կամ կատարման ոչ ենթակա, ապա սույն Պայմանագրի մնացած բոլոր դրույթները կպահպանեն իրենց ուժը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

7.9 Սույն Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե այն կատարված է գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

7.10 Սույն Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում է գրավոր կերպով՝ սույն Պայմանագրի վավերապայմաններում նշված ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու միջոցով կամ Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով:

7.11 Կողմերից յուրաքանչյուրի անվանման, հասցեի, վճարման կամ այլ վավերապայմանների փոփոխության դեպքում, համապատասխան Կողմը պարտավոր է այդ մասին պատշաճ կերպով գրավոր ծանուցել մյուս Կողմին այդպիսի փոփոխությունից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, հակառակ դեպքում նախկինում տրամադրված վավերապայմաններով արված վճարումները, ուղարկված ծանուցումները համապատասխանաբար կհամարվեն ժամանակին կատարված կամ պատշաճ հասցեով ուղարկված:

7.12 Սույն Պայմանագրի առարկային վերաբերող և սույն Պայմանագրով ուղղակիորեն չկարգավորված բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

7.13 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Կողմերն արձանագրում են, որ սույն Պայմանագրի ստորագրման պահին Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից որպես պանդեմիա որակված կորոնավիրուսի տարածումը կանխարգելելու նպատակով Հայաստանի Հանրապետությունում հայտարարված է արտակարգ դրություն, իսկ պարետի որոշումներով Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվում են արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված սահմանափակումներ, ինչից ելնելով, Կողմերը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավական հնարավորությունից, սույն Պայմանագիրը ստորագրում են Պայմանագրի ստորագրված օրինակների լուսապատճեններն էլեկտրոնային փոստով փոխանակելու միջոցով:

7.15 Պայմանագրով նախատեսված մի Կողմի իրավունքին համապատասխանում է մյուս Կողմի պարտավորությունը՝ ապահովելու այդ իրավունքի իրացումը:

7.16 Կողմերը գիտակցում և ընդունում են, որ սույն Պայմանագրի կնքման պահին Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից որպես պանդեմիա որակված կորոնավիրուսի տարածումը կանխարգելելու նպատակով Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրությունը չի խոչընդոտում Պայմանագրով սահմանված պարտավորությունների բարեխիղճ և ժամանակին կատարմանը, ուստի, Կողմերը զրկվում են հետագայում Պայմանագրով սահմանված պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու դեպքում որպես հիմք Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրությունը վկայակոչելու իրավունքից:

7.17 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

7.18 Սույն Պայմանագիրը ստորագրող Կողմերի ներկայացուցիչները սույնով հաստատում են, որ ունեն բոլոր անհրաժեշտ լիազորությունները ստորագրելու սույն Պայմանագիրը և ներկայացնելու Կողմերին Պայմանագրով նախատեսված հարաբերություններում:

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Վաճառող	**Գնորդ**
«Ալեռտո» ՍՊԸ	**«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ**
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Մխիթար Հերացի 14/3	Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 02686862	ՀՎՀՀ՝ 01540062
«Էվոկաբանկ» ՓԲԸ	«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1660008914310100	Հ/Հ՝ 2470102796740000
Ս.Բաղդասարյան	**Ա.Սարգսյան**
Տնօրեն	*Գործադիր տնօրենի ժ/պ*

Հավելված N 1
2020թ. հունիսի 24-ին ստորագրված
Թիվ ՀՀՀ-ՄԱԱՊՁԲ-20/11-Պ պայմանագրի

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԱՐԺԵՔԸ

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Ապրանքի բնութագիրը	Չափման միավոր	Քանակ	Միավորի գինը ՀՀ դրամ	Ընդհանուր արժեքը ՀՀ դրամ
1.	Հրշեջ ռետինափողրակ փողակով	РПК(В)-Н/В տեսակի հրշեջ ճնշման փողրակ: ГР- 50 տեսակի մանեկներով միացված: Փողրակի արտաքին մասը յուղադիմացկուն սինթեթիկ մազաթելից է: Մանեկները համալրված են ռետինե միջադիրով: Փողրակի ներսը պետք է լինի պոլիմերային պատվածքով: Փողրակի տրամագիծը կազմում է 51+2 մմ, երկարությունը 20+1,0 մետր: Փողրակը նախատեսված է հրշեջ ներքին ծորակների կահավորման համար: Աշխատանքային ճնշումը ոչ պակաս 1 ՄՊա: Համապատասխանի ГОСТ Р 51049-2008:	հատ	20	23500	470000
2.	Կրակմարիչ	Փոշեմարման, ԿՓ-8 տեսակի: Բալոնը 2020թ. արտադրության, /արտադրման տարեթիվը բալոնի վրա դաջված/գույնը կարմիր , իրանի փորձարկման գործարանային երաշխիքային ժամկետը 10 տարի, լիծքը՝ 5 տարի: Լիցքավորված փոշու կշիռը 8+/-0.4 կգ,: Աշխատանքային ճնշումը կրակմարիչի իրանում 1.2-1.6 ՄՊա,Կանգնակ - տակդիրով , փականի պտուտակավոր հանգույցը մետաղյա, դուրս մղման	հատ	5	13200	66000

		փողրակով: Նախատեսված է A, B, C, E դասի հրդեհների մարման համար: Փաթեթավորումը գործարանային: Կրակմարիչի իրանը պիտակավորված է: Պիտակին նշվում է անվանման նշանակության, օգտագործման, անվտանգության կանոնների, պահպանման, երաշխիքային ժամկետի, արտադրող կազմակերպության, արտադրման ժամկետի, տեխնիկական պայմանի, հրդեհների մարման դասերի և քաշի մասին տեղեկատվություն: Համապատասխանի ГОСТ Р 51057-2001:				
3.	Կրակմարիչ	Փոշեմարման, ԿՓ-5 տեսակի: Բալոնը 2020թ. արտադրության, /արտադրման տարեթիվը բալոնի վրա դաջված /գույնը կարմիր , իրանի փորձարկման գործարանային երաշխիքային ժամկետը 10 տարի, լիծքը՝ 5 տարի: Լիցքավորված փոշու կշիռը 5+/-0.25 կգ,: Աշխատանքային ճնշումը կրակմարիչի իրանում 1.2-1.6 ՄՊա,Կանգնակ -տակդիրով , փականի պտուտակավոր հանգույցը մետաղյա, դուրս մղման փողրակով: Նախատեսված է A, B, C, E դասի հրդեհների մարման համար: Փաթեթավորումը գործարանային: Փաթեթավորումը գործարանային: Կրակմարիչի իրանը պիտակավորված է: Պիտակին նշվում է անվանման նշանակության, օգտագործման, անվտանգության կանոնների, պահպանման, երաշխիքային ժամկետի, արտադրող կազմակերպության, արտադրման ժամկետի, տեխնիկական պայմանի, հրդեհների մարման դասերի և քաշի մասին տեղեկատվություն:Համապատասխանի ГОСТ Р 51057-2001:	հատ	20	9840	196800

4.	Կրակմարիչ	Ածխաթթվային կրակմարիչ, ԱԿ-3 տեսակի Բալոնը 2020թ. արտադրության, գույնը կարմիր , իրանի փորձարկման գործարանայիներաշխիքային ժամկետը 10 տարի , լիծքը՝ 5 տարի: Լիցքը ոչ պակաս 3.+/-0.15 կգ Աշխատանքային ճնշումը կրակմարիչի իրանում ոչ պակաս 5,88 ՄՊա,Կանգնակ տակդիրով,փականի պտուտակավոր հանգույցը մետաղյա դուրս մղման լայնուկ փողակով: Նախատեսված է B, C, E դասի հրդեհների մարման համար: Փաթեթավորումը գործարանային: Փաթեթավորումը գործարանային: Կրակմարիչի իրանը պիտակավորված է: Պիտակին նշվում է անվանման նշանակության, օգտագործման, անվտանգության կանոնների, պահպանման, երաշխիքային ժամկետի, արտադրող կազմակերպության, արտադրման ժամկետի, տեխնիկական պայմանի, հրդեհների մարման դասերի և քաշի մասին տեղեկատվություն: Համապատասխանի ГОСТ Р 51057-2001:	Հատ	5	15000	75000
		ԸՆԴՀԱՆՈՒՐ				**807800**

Վաճառող
«Ալեռտո» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Մխիթար Հերացի 14/3
ՀՎՀՀ՝ 02686862
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1660008914310100

Ս.Բաղդասարյան
Տնօրեն

Գնորդ
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

Ա.Սարգսյան
Գործադիր տնօրենի ժ/պ

Հավելված N 3
«24»06.2020թ. կնքված
N ՀՀՀ-ՄԱԱՊՁԲ-20/11-Պ *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների						Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
«24»06.2020թ. կնքված
N ՀՀՀ-ՄԱԱՊՁԲ-20/11-Պ *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N _____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը

(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն